



28. ԴԱԼԻԲԵԳԻ ՀԵՔԻԱԹԸ

Սիասոն թաքավորը իրեք տղա ուներ: Օրերից մե օր մեծ տղեն մորն ասավ. «Այ մեր, մեր հորն ասա՛, թո մեզի հրացան առնի, էթանք որսորդություն սովորենք»:

Հիրիկունը, որ թաքավորն էկավ տուն, կնիկն ասավ.—Այ մարթ, քո տղեքն ուզըմ են որսորդություն սովորեն, իրեք հատ հրացան առ:

Թաքավորը տղեքին կանչեց, ասավ.—Ինչ որ ասըմ եք, ընձի՛ ասեք, ես եմ ձեր հերը:

—Հա՛յր, —ասեցին տղեքը, —մենք ուզըմ ենք որսորդություն սովորենք, իրեք հատ հրացան առ մեզ համար:

Թաքավորն ասավ.—Սիրելի որդիներ՛ր, բա ամոթ չի՞ մեզ համար, որ դուք՝ թաքավորի ժառանգ, էթաք որսորդություն անեք, լսողն ի՞նչ կասի:

—Հա՛յր, ուրիշի ասածի ուշ մի՛ դարցրա:

—Լա՛վ, —ասեց թաքավորը, —որ ասըմ եք, ասըմ:

Իրեք հատ հրացան առավ, տվեց տղեքին, ասավ.—Վուվ որ ձեզանից չուտ գա ու ընձի որսի միս բերի, էն էլ կըհըլնի իմ սիրած ժառանգը:

Հառավոտը՝ աղոթրանի հետ, տղեքը քնից հելան վեր, հրացանները քցին հուսները, գացին որսի:

Գացին, գացին, հասան ընեց մե տեղ, որ իրեք հատ ճամփա գալըմ միանըմ ին հիրար: Մենձ տղեն ասավ. «Մենք էկանք հասանք էս ճամփեքին: Էս ճամփեքից ամեն մեկը էթըմ ա մե յանի վրա: Էս ծառն էլ՝ մեզի նշան: Ամեն մեկս կէթանք էս ճամփեքով, հիրիկունը, որ գործից կըպրծնենք, կըգանք էլի էս ծառի կուշտը կըհանդիպենք: Ասին ու ամեն մեկը մի յանի վրա գացին: Գացին, դես ման էկան, դեն ման էկան, հիրիկվան յանը մենձ ու միչնեկ ախպերը դափ-դատարկ էկան ետ: Սպասին, սպասին, մեկ էլ տեհան հետս պստի ախպերն ա գալըմ: Գալըմ, ինչ ա գալըմ, աչկդ ինչ որ կզրի, հետը բերեր ա՛ լո՛ր, կաքանվ, լապստրանկ, ճնջո՛ւղ:

Հիրիկունը որ էկան, տուն մենձ ու միշնեկ ախպերը նիաթները կախ, տխուր ին, իսկ պատի ախպերը ուրախ-ուրախ բերած ավր տվեց վաքիլ-վազրներին, էկավ հոր կուշտը:

Հեքսի օրը իրեք ախպերով էլի գացին որսի: Մենձ ու միշնեկ ախպերներն ասին՝ էկեք ճամփեքս փոխենք: Փոխեցին, բայց հիրիկունն էլի դարտակ էկան, իսկ պատի ախպերը էտ օրը մե հատ մարալ խփեց, քցեց թևին, ուրախ-ուրախ էկավ մտավ պալատ:

Ախպերները, որ տեհան, չէ, հիրանց հաջողութունը չի բերըմ, էկան թաքավորի կուշտը ասին. «Այ հեր, էլ մենք էս կողմերում չենք մնա, թո՛ւյլ տուր էթանք օտար երգիր, միգուցե հաջողութուններս բացվի»:

Հերն ասավ.—Կամքը ձերն ա, ոնց ուզըմ եք, ընենց էլ արեք:

Բարի լուսը բացվի ձեր վրեն, բարի լուսը բացված թաքավորի տղեքի վրեն, տղեքն հելան վերցրին հիրանց գենք ու զրահը, ուտե-լեղեն-մուտեղեններ բարձին ձիանքին, ճամփա հընգան:

Շատ գացին, թե քիչ, չատ ու քիչն էլ մեզ հայտնի չի, արևը մոտեմուտ էր, պատահան մե սարի: Էս սարի էն յանին մե հատ ձոր կար: Էդ ձորի մեջ աբըրմ ին քառասուն ավազակները հիրանց գլխավորի հետ:

Քչեր էր, տղեքը հիրանց չաղրը գանին, մտան մեջը, որ քնեն, պատի ախպերն ասավ.—Սիրելի ախպերնե՛ր, մենք ըսենց չենք կանա քնի, էսի ավազակների երգիր ա, քչերը կարող ա վտանգ պատահի, էկեք հերթով պահակ կայենք:

Հառաջի քչերը մենձ ախպերը կայնավ: Քչերվան մե վախտը չիք հընգավ ըստա ջանը, վախեցավ, փախավ, էկավ մտավ չաղրը:

Մյուս քչերն էլ միշնեկ ախպերը փախավ: Հերթն էկավ պատկին: Թարսի նման էդ քչեր ավազակապետը հելավ հիրա սայմանը ման գալու, տեհավ, որ հեսա մե հատ չաղր ա գանած, կշտին էլ ձիանք կան հորըկած:

Կանչեց հիրա ավազակներից քսան հոքու, ասավ.—Գացեք տեսե՛ք՝ էդ ի՞նչ մարթիկ են:

Ըստանց գալու վախտը Դալիբեգը քնած էր (Դալիբեգը էդ տղի անունն էր), հա՛ հայա մոտենըմ ին, որ Դալիբեգի ձին էկավ կայնավ տիրոջ կուշտը: Անլեզու հայվանը հասկացավ, որ հիրա տիրոջ գյանքը վտանգի տակ ա, սկսեց խրխնջալ: Որ խրխնջաց, ձենը հընգավ Դալիբեգի անգաջը, Դալիբեգը զարթնավ: Զարթնելն ու ձիան վրեն նստելը մեկ հելավ, թուրը քաշեց ասավ. «Դե վով ուզըմ ա, թո մեյդան գա»:

Ավազակներն էկան հառեջ, ասին.—Այ հա՛յ, —ասին,—էս ի՞նչ ա, էս խեր հըլնի, կուչն հիրա թևով, օձն հիրա պորտով էս կողմե-

րում չէր հրեացե, էս դու քանի՞ գլխանի ես, տղա՛, որ էկե մտեր ես մեր սայմանը:

Դալիբեզն ասավ.—Ճտերն աշունն են համբըրմ:

Էս ասելն էր՝ հասան հիրար: Ընդանք՝ քսան ջան, Դալիբեզը՝ մենակ: Բայց Դալիբեզի հեջ վեջը չէր, տվեց սաղի՛ն ջարթուփչուր արավ, չինեց աղցան, լցեց ընդե: Էս տուրուղմփոցի ձենը հասավ ավազակապետին, ավազակապետն հելավ հեծավ ձին, վերցեց մնացած քսան ավազակներին, քչեց էկավ կովի տեղը: Էկավ տեհավ, ի՞նչ տենա, որ հեսա մե տղա սուրը քաշած կայնած ա: Ուղեց հառաջանա, Դալիբեզը էլ չըհամփերավ, հանեց թուրն ու տալու բաշտան նամարդուծյուն չարավ, ավազակապետին մեշտեղից արավ հրկու կես, մնացածին էլ տափ-սվաղ արեց, էկավ մտավ չաղըր, ախպերներին զարթնցրեց, պատմեց հիրա գլխի էկածը: Ըստանք աբլորցան, թե բա ընչի՞ մեզի չասիր, մենակ-մենակ կովար:

—Ոչինչ,—ասեց Դալիբեզը,—ախպեր չե՞նք, հեքսի անգամ էլ դուք ինձ համար նեղուծյուն կըքաչեք:

Հելան գացին ավազակների սայմանը, տեհան աշխրքի մջին ինչ որ կա, ըստե լցած ա: Մենձ ախպերն ասավ. «Ոնչ մե բանի ձեռ չըտաք»:

Հավաքին հիրանց վեչերը ըտեղից հեռացան:

Շատ գացին, թե քիչ, հայդնի չի, հանդիբան մե մենձ գաղի, մեկ էլ մե հատ ջրհորի: Մուլթն էր: Ասին՝ էլ ըստուց լավ տեղ չըկա, քչերը մնանք ըստե: Էլի չաղըր գանին, հաց-մաց կերան, հելան, որ քնեն, մենձ ախպերն ասավ. «Հերթն իմն ա, էթամ կայնեմ պահակ»:

Քչերան մե վախտը մե ձեն հընգավ մենձ ախպոր անգաջը, դողը բռնեց, ասավ. «Ջա՛նըմ, էս անհատուն քչերը վով ոխկ կանի գա մեր վրեն»:

Գնաց, քնավ: Հեքսի օրը միջնեկ ախպերն էկավ: Էս էլ մեքյա կայնավ, տեհավ չէ, սիրտը տուկ-տուկ ա անըմ, էս էլ արանքը ճղեց:

Մնաց, հերթն հասավ Դալիբեզին:

Դալիբեզն էկավ կայնա՛վ, կայնա՛վ, վերջը քունը տարավ: Հըլը աշկը չէր կպցրե, հիրա հավաղարիմ ձինը էկավ զարթնեցրեց: Դալիբեզն հելավ, աշկերը ճմոեց, մեքյա ման էկավ, դես-դեն մլուլ արավ, որ չըքնի, վերջը քունը տարավ: Էլի ձինը էկավ, ոտերը տփեց գետին, խրխնջաց, տղին զարթնցրեց:

Դալիբեզն հելավ, ի՞նչ տենա որ հեսա հարուր քառասուն հատ արաբ՝ սրերը քաշած կայնած են: Տղեն հիրանը չըկորցրեց, թռավ ձիան թարքը, թուրը քաչեց, հընգավ ըտանց մեջը, սկսեց փրթել:

Իշքան հինքը փրթեց, Էրկու Էնքան ձին փրթեց: Մինչև լուս արարենների վերջը տվին: Դալիբեգն Էկավ տուն, տեհավ, որ ախպեր-ներն հըլը քնից չեն գարթնե:

—Այ ձեր տունը չըքանդվի, հըլը քնած եք:

Ախպերներն հելան, նեղացան Դալիբեգի վրեն, թե՛ ինչ ես հա-ռավոտ քչերհանա ձենը քցե գլոխդ, չես թողըմ մարթ մե կանոնա-վոր քնի:

—Քնելը ո՞րն ա, ա՛յ ձեր արավթը խեր, մե հըլը հելեք-տեհեք ինչ ա կատարվըմ ըստե:

Ախպերներն հելան տեհան, որ գետինը ջանդակներով ծածկ-ված ա, կալմակալ արին, նեղացան պստի ախպոր վրեն, թե որ կոիվ ա հելե, ընչի հիրանցը խաբար չի տվե: Դալիբեգն ասավ՝ ոչինչ, էս հո վերջինը չի:

Ախպերներով հելան գացին գաղեքը, տեհան, որ աշխար-քի մջին լեզուդ ինչ որ պստի, ըստե կա: Ընդուց էլ բան չըվեր-ցին, Էկան նստան ջրհորի կուչտը, հաց ին ուտըմ, մենձ ախպերն ասավ. «Ծարավ սիրտըս թուլանըմ ա, ո՞նց անենք, որ մեքյա ջուր խմենք»: Դալիբեգն ասավ. «Ընձի հիչցրե՛ք խորը, հանեմ»: Պստի ախպորն հիչցրին խորը, ջուրը հանին խման, ձիանքին էլ ջրեցին, բայց ախպերները նամարդ ին, խորից հանելու վախտը ճոպանը կդրին, ախպորը թողին խորի մեջը: Հավաքին հիրանց հելած-չե-լածը, ավազակների հարստությունը լցին խուրջինները, բարցան ձիանքին, քչին: Ինչ արին-չարին, Դալիբեգի ձին խորի բերնից չը-հեռացավ: Հիրանք հիրանց ձիանքը քչին Էկան:

Շատ Էկան, թե քիչ, հասան հիրանց հոր երգիրը: Ուրբար տա-րան թաքավորին, թե՛ բա չես ասի, տղեքդ գալըմ են: Թաքավորն ու թաքուհին շատ ուրախացան, ահագին թաղարուքով հելան տղեքին ընդունին, բայց տեհան, որ պստի տղեն չըկա: Հարցրին, թե՛ բա հուր ա՞ ձեր պստի ախպերը: Ըստանք վերցին, թե՛ խաբար չենք, էնի հուրիչ ճամփով ա գացե, մենք՝ հուրիչ:

Դե թո ըստրանք ըսենց ստե մնան, մենք խաբարը տանք Դալիբեգից: Ախպերների էթալուց հետո Դալիբեգը մնաց ջրհորի մեջ, շատ դեսը-դեն արավ, չըկարցավ դուս գա: Ոորի հերգարու-թյունը Էրկու հարիը գյազ էր, անջաղ ձիան խրխնջոցի ձենը հընդ-նըմ էր անգաջը: Օխտը օր Դալիբեգը մնաց խորի մեջը: Ուտելու բան չըթթավ, սոված էր: Մեկ էլ տեհավ, որ հեսա ջրի մջից մե հատ գորտնուկ դուս Էկավ, դես թուավ, դեն թուավ, խորի պատերը քան-դելով, բանցրցավ հելավ դուս:

«Յավաչ ես էս հայվանի չափ էլ չըկամ, որ ըսենց կուճուրվե նստեր եմ ըստե»: Հելավ, խորի պատերը բռնեց, հիրան համար

ոտի տեղ չիքեց, բարցըրացավ, խորից դուս էկավ: Դուս էկավ, տեհավ՝ հեսա հիրա հավատարիմ ձինը կայնաձ ա խորի պոնգին: Զեռը քցեց ձիան կոլաններին, որ թուլցնի, ուժ չուներ, ձեռները պրծավ, տփվավ գետին, ըտենց բեռւչ էլ մնաց մինչև հառավոտ:

Լուսը որ բացվավ, Դալիբեգը իշքան ուժ ուներ, հավաքեց, հե-
լավ նըստավ ձիանը: Զիան գլոխը բաց թողեց, ասավ՝ հուր տանըմ
ա, տանի:

Գնաց դուս էկավ մե դուրան տեղ, մե խելաք էլ գնաց ոաստ
էկավ իրեք ճամփորթ մարթի: Էս մարթիքը որ Դալիբեգին տեհան,
մեկը մեկին ասավ. «էս էլ մեր ավը»:

—Տղա՛,—ասին,—գենք-գրահդ հա՛ն, ձիանից հիջի՛:

—Հէյ, տղե՛ք, հեռացե՛ք իմ ճամփից, խեղճ ու կրակ մարթ եմ,
թողեք իմ ցավով տապկվեմ:

Շատ ասեց, քիչ լսեց, քիչ ասեց, ըսկի չըլսեց, իշքան ուժ ուներ,
հավաքեց, թուրը քաշեց, իրեքին էլ կուրբան արավ անգաջ անող-
ներին:

Դալիբեգն էր, ձին քչեց գնաց հիրա ճամփեն շարունակեց, մու-
թը հընգնելով էր, հասավ մե գեղ: Գնաց մե դուս հառեջ կայնավ,
դուռը ծեծեց, տանտերն հելավ:

—Ի՞նչ մարթ ես,—ասավ:

—Ճամփորթ մարթ եմ,—ասավ,—մութը վրա տվեց, քնելու
տեղ չունեմ, թույլ տու էս քչեր քեզի կոնախ հըլնեմ:

Էդ մարթը վերցեց Դալիբեգին տարավ հիրա տունը, լավ հար-
գեց-պատվեց, մե ձեռք լավ փափուկ տեղաչորի մեջ էլ քնցրեց, ձի-
անը լավ կորմ տվեց, հառավոտն էլ արդն անպակաս արավ, տղին
ճամփու դրեց:

Դալիբեգը շարունակեց հիրա ճամփեն, շատ գնաց, թե քիչ, էտ
էլ թո լսողներն ասեն, գնաց հասավ մե թաքավորանիստ քաղաք:

Էս քաղաքը սքի մեջ էր, քաղաքացիք սաղ սև ին հագե:

Դալիբեգը պատահած մարթի մեկին հարցրեց. —Էս ի՞նչ խա-
բար ա, ընչե՞ք ըսենց սուք ու չիվանի մեջ:

Էս մարթը վերցեց ասավ. —Քեզնից պահեմ, Ասսուց ինչ պա-
հեմ: Հեսա տասնհինգ օր ա, որ Քյալագյոզ Կայրամանը էկե հիրա
զորք ու բաբանով նստեր ա մեր քաղաքի մեջը, ոչ մի մարթ չի կա-
նըմ ընդա դեմը խոսա: Էրկու շաբաթվա մեջ եքա անահուն քաղա-
քը խողը-մոխիր դարցրեց:

Դալիբեգն ասավ. —Բա ձեր թաքավորն ի՞նչ ա մտածըմ:

—Ի՞նչ մտածի խեղճ թաքավորը, վախից լեղապատառ ա հելե,
հեն ա հիրա պալատի մեջը պախկվեր ա:

Դալիբեգն ասավ. —Ո՞րն ա ձեր թաքավորի պալատը:

—էն բանցր սիւտակ շենքը տենում ե՞ս, էնի յա:

Դալիբեգը ձին քշեց գնաց թաքավորի պալատը: Որ ոխակով ներս մտավ, վաքիլ-վեզիր սաղ քաշվան մե յան, Դալիբեգը գնաց, կայնավ թաքավորի առաջ, գլոխ տվեց, խոնարհվավ:

Թաքավորն ասավ.—Ի՞նչ մարթ ես, ի՞նչ ես ուզում:

Տղեն ասավ.—Քո ողջությունը, թաքավոր:

Թաքավորն ասավ.—Էլի որ:

Դալիբեգն ասավ.—Թաքավորն արբած կենա, էս ի՞նչ խաբար ա, էս ինչ ա՞ պատահե քո քաղաքին:

Թաքավորն ասավ.—Արևիդ մեռնեմ, տղա՛, ո՞րն ասեմ, ո՞րը թողեմ: Հեսա տասնըհինգ օր ա, որ Քյալագյոզ Կայրամանը հիրա գորքով էկե մտեր ա մեր քաղաքը, աչ ու ձախ կոտորում ա: Ոչ մե մարթ չի կանում ընդա հառաչն առնի: Իմ գորքն էրկու օրվա մեջ կոտորեց, մենք էլ ըսենց սուք ու չիվանի մեջ նստած ենք:

—Թաքավոր, —ասեց Դալիբեգը:

Թաքավորն ասեց՝ համե:

—Թաքավոր, ի՞նչ կըտաս, որ Քյալագյոզ Կայրամանի հախիցը գամ:

—Է՛, տղա՛ ջան, դու հըլա շատ ջահեկ ես, քամիդ վերևը գանում:

—Չէ՛, չէ՛, թաքավոր, ես հանաք չեմ անում:

—Որթի՛, —ասեց թաքավորը, —Քյալագյոզ Կայրամանի ձեռի մզրադի երգարըթունը տասերկու գյազ ա, դու հո՞ւր կանաս ընդա հախիցը գաս:

—Թաքավորն արբած կենա, —ես ուզում եմ էդ գազանի վերջը տամ, խնդիրքս գետին մի՛ քցի:

—Այ տղա, —ասեց թաքավորը, —չառըդ քաշի գնա՛ ըստեղից, գլխիցդ ձեռ ես քաշե, ինչ ա, յա դու յա մե ճանջը ընդա հառեջ, փչի՛ կըթռնես:

—Թաքավոր, աղաչում, մոռնաթ եմ անում:

Թաքավորն ինչ արավ, չարավ, ճար չըհեկավ, տղեն մնաց հի-րան ասածին:

Ասավ.—Թաքավոր, ասում ես՝ ընդա մզրադը քանի գյազ ա՞:

—Տասներկու:

—Թաքավոր, —ասեց Դալիբեգը, —կանա՞ս ընձի մե 15 գյա-զանոց մզրադ չիքել տա:

Թաքավորն ասավ՝ կանամ:

Թաքավորը կարքադրուկթուն արավ, ասեց.—Մե հատ տասն-հինգ գյազանոց մզրա՛դ չիքեք:

Է՛հ, թաքավորի գործ էր, հինգ ըոպեյան մեջը մզրադը բերին տվին տղին:

Տղեն հելլավ նստավ հիրա հավաղարիմ ձինը, մզրաղն առավ ձեռն ու քչեց՝ հուր ես, Քյալազյո՛ղ Կայրաման, գալըմ եմ:

Դալիբեզը ձին քչեց գնաց հասավ Քյալազյոզ Կայրամանի սայմանը, իշկանց, իշկանց, դարցավ էկավ Թաքավորի կուչտն, ասավ. «Թաքավո՛րն աբրած կենա, կանա՞ք մե օխտը սել ցան ու ցախ տանեք Թափեք Քյալազյոզի սայմանին»:

Թաքավորն հրամայեց, ասավ. — Էս տղեն ինչ կասի, կանեք:

Սելերով ցախը-ցանը տարան լցին սայմանի վրեն: Դալիբեզը գնաց փուռ շիքեց, կրակ տվեց էդ ցան ու ցախը վառեց, մզրաղը դրեց կրակի մեջ, յափնջին քաչեց գլխին, քնավ:

Քյալազյոզի պահակները որ էն յանից տեհան հիրանց սայմանի վրեն կրակ ա վառվըմ, խառնվան հիրար: Հավարը քցին Քյալազյոզին, ձեն տվին: Քյալազյոզը քնած էր: Օխտ օր պըտի քներ, վեցը քներ էր, մե օր էլ կար, որ քունն առներ: Ձեն-ձունի վրեն զարթնավ, գոռում-գոչում դրեց, սար-ձոր դղրդացրեց, ասավ՝ մզրաղս ու ձինս բերեք: Բերին:

Նստավ ձիան վրեն, ձին տակին ճմաց, մզրաղն առավ ու քչեց դբա սայմանը: Մե սհաթ չանցած՝ հասավ սայմանի գլոխը, ձին քչեց դբա կրակը, տեհավ տղեն կրակի կողին քնած ա:

Տղին հանեց վեր, ասավ. — Հը, տղա՛, էս դու քանի՞ գլխանի ես, որ էկե մտեր ես իմ սայմանը, արխային էլ քներ ես:

— Տո, — ասավ, — չո՛ւն-չանորթի, քեզի սայման վո՞վ ա տվե, որ դու ըտենց կալմակալ ես անըմ:

Քյալազյոզն ասավ. — Հըլը ստան տե, հա, հերեզվա էրեխեն ա, էկե վրես բոռըմ ա:

Դալիբեզն էլ չըհամփերավ, Թռավ ձիան վրան, ձին քչեց դբա կրակը, ձեռը քցեց կրակի մջից մզրաղն հանեց ու գյուլի պես քչեց Քյալազյոզի վրեն, հասնելու բաշտան մզրաղն առ հա՛ կոխեց Քյալազյոզի մինուճար հաշկի մեջ. մզրաղի ծերն էն յանից դուս էկավ, Թուրը քաչեց գլոխը Թոցրեց, ոտ ու ձեռը Թիքա-Թիքա արավ, գլոխը զանեց մզրաղի ծերն ու տարավ Թաքավորին ընծա:

Վաքիլ-վազիրը, որ տեհան Քյալազյոզի գլոխն ու մզրաղը, լեղապատառ փախան:

Դալիբեզը բոռաց, ասավ. — Կա՛յներ, կա՛յներ, այ ձեր տուն չըքանդվի, ընչե՞ք փախենըմ, ճիշտ ա, էսի Քյալազյոզի գլոխն ա, հըմա ջանդակը հետը չի:

Ասավ. — Էս գլոխը ձեզի հընձա եմ բերե, դե գնացեք ազադ արբե՛ք:

Թաքավորը կանչեց տղին, ասավ. — Տղա՛, գլխիդ-արևիդ մեռնեմ, ասա՛, ի՞նչ ես ուզըմ, որ քո լավության տակից դուս գամ:

Տղեն ասավ.—Թաքավո՛րն արբած կենա, քո ողջութիւնն եմ ուզըմ, ինձ ոչ մե բան էլ հարգավոր չի:

Թաքավորն ասավ.—Ձէ՛, որթի՛, լեզուդ ինչ որ պտտըմ ա, ասա՛՝ հարստութիւն, տո՞ւն-տեղ:

Տղեն ասավ.—Թաքավո՛ր, իմ հերն էլ քո նման թաքավոր ա, ես էլ թաքավորի տղա եմ, ինձ ոչ մե բան հարգավոր չի, միայն մե քանի օրվա պաշար եմ ուզըմ, որ էթամ հասնեմ իմ հոր երգիւրը:

Հեքսի օրը տղեն քնից հելավ, առավ հիրա ուտելու պաշարը, մնաս բարե ասեց թաքավորին, նստավ ձին, գնաց: Շատ գնաց, քիչ գնաց, հասավ հիրա հոր քաղաքը:

Ըսեղ էլ նույն դրութիւնն էր: Էլի սաղ քաղաքացիք սև ին հագե, սուք ու չիվանի մեջ ին: Տղեն քաղաքի կրաղին հանդիպավ մարթի մեկին, հարցրեց, թե՛ էս ի՞նչ խաբար ա: Էս մարթը վերցեց, թե. «Ինչ ասեմ, որթի՛, հեսա օխտ օր ա, որ Լաթիֆ շահը հիրա զորքով մտեր ա մեր քաղաքը, սաղ ժողովրդին դիվադադար ա արե, աստղ-ներին թիվ կա, ընդա զորքին թիվ չըկա: Ոչ մե մարթ էլ չի կանըմ ընդա հառեչն առնի»:

—Հայրի՛կ, ո՞րն ա ձեր թաքավորի պալատը:

—Հէյն ա, հա՛, էն որ սև դրոշակ կա խփած, էնի մեր թաքավորի պալատն ա:

Տղեն քչեց գնաց թաքավորի պալատը:

Նես մտավ, բարե տվեց, հարցրեց.—Թաքավո՛րն արբած կենա, էս ի՞նչ խաբար ա, էս ընչի ա՞ ձեր քաղաքը սքի մեջ:

—Է՛հ,—ասեց թաքավորը,—ինչ ասեմ, որթի՛, էս մե չաբաթ ա երկնքից կրակ ա թափըմ մեր գլխին: Լաթիֆ շահը հիրա զորքով մտեր ա քաղաքը, էլ աջ ու ձախ չի հարցընըմ, սաղին կոտորըմ ա:

—Թաքավո՛րն արբած կենա, բա քո երգըում մե մարթ չըճար-վա՞վ, որ դուս գար շահի դեմ:

—Շահի դեմ, որթի՛ս, ոչ մե մարթ էլ չի կանա դուս գա:

—Իսկ եթե ես դուս գամ, թաքավո՛ր:

Թաքավորը թարս իչկած տղին, ոանգ-ոունգ խառնեց, ասավ.—Այ որթի, ինչ գործ ունես, անցավ գլուխդ ցավի տակ ես ղընըմ, գնա՛՝ քո գործին, թող մենք մեր եղով տապկվենք:

Տղեն չըլսավ թաքավորին, հելավ նստավ հիրա ձինը, զենք ու զրահն հաքավ (դե ծանոթ էր հիրա հոր սայմաններին), քչեց գնաց հասավ Լաթիֆ շահի չաղրների կուշտը: Պահակներն հելան ձի-ան հառեջը կզորին, ասին. «Հեյ, տո՛ւնդ քանդվի, տղա՛, էդ ի՞նչ ես անըմ, ե՛տ դարցի, շահը կըհիմանա, մեծ թիքեդ անգաջդ կըթողի, ե՛տ դարցի»:

Տղեն ասավ.—Հո՞ւր ա է՛, հո՞ւր ա ձեր շահը:

Ասին՝ հաց ա ուտում:

—Տո հո՞ւր ա, մե ասեք՝ ես ընդա հացը գլխին հարամ անեմ:

Ասավ, ձիան գլուխը թեքեց դբա շահի չաղորը: Հասնելու քիմին, զանեց ջախըփուրթ արավ շահի չաղորը, մտավ գորքի մեջ, աջ փրթեց, ձախ փրթեց, իջքան հինքը կոտորեց, էրկու էնքան էլ հիրա ձինը կոտորեց, շահի գլուխն էլ կուրբան արավ ձեզի, տնգեց թրի գլխին, ձիան գլուխը թեքեց դբա տուն:

Ճամփին ոսստ էկավ հիրա ախպերներին, ըստանք հըլա նոր մե քանի զինվոր քցեր ին հետևները, գալըմ ին, որ էթան շահի վրեն կոխվ, մե ոտ հառեջին քցըմ, տասը ոտ՝ հետ, էնքան որ վախենըմ ին:

Դալիբեզը ճանացավ ախպերներին, ախպերները՝ չըճանաչան: Հասավ ու ամենքին որ մե հատ չըզանեց, մշկներից մեմե գոլ կաչի հանեց: Ախպերները լեղապատառ փախան՝ ա՛յ հեր, որտեղ ես, գալըմ ենք:

Էկան հորը պատմին, թե՛ բա չես ասի, ա՛յ հեր, գացինք, շահին քշինք տարանք մեր սայմանից հեռացրինք, դարցանք գալըմ ինք, ճամփի կրաղին՝ թփի տակից, մե լապստրակ փախավ, ձիանքը խոտնան, հընգանք, մեշկներս լոպկվավ:

Տղեքը հըլը հիրանց ասելիքը չին վերջացրե, որ Դալիբեզն էկավ: Էկա՛վ, ի՛նչ էկավ: Ախպերները որ Դալիբեզին տեհան, ուզըմ ին մկան ծակը փոխ առնին:

Դալիբեզն ասավ.—Հը՞, չըհըլնի ըստեղ էլ եք գլոխ գովացե:

Տղեքի թուրքը չորացեր էր:

Դալիբեզն ասավ.—Ա՛յ հեր, բեր թո էս անամոթները պատմեն, թե ո՞նց են հիրանց ախպորը կորցրե:

Թաքավորն ասավ՝ ի՞նչ ախպեր:

—Ոնց թե ի՞նչ ախպեր, թաքավո՛րն աբրած կենա, ես ըխա ըտանց ախպերն եմ, քո պստի տղեն եմ:

Թաքավորն հիրա աչկերին չէր հավատըմ, հելավ փաթաթվավ տղին, ճակատը պաչեց:

Դալիբեզն ասավ.—Հե՛ր, թո հըլա էս անամոթները պատմեն, թե ինչ են խաղացե իմ գլխին:

Թաքավորն ստիպեց տղեքին: Տղեքը մեկ-մեկ պատմեցին ինչ որ հելեր, չէր հելե:

Թաքավորն ասավ.—Կորե՛ք, շան կաթ ծծա՛ծներ, էլ աչկիս չէրևաք:

—Վաքի՛լ-վազիր, աքսորե՛ք ստանցը իմ երգրից:

Վաքիլ-վազիրն էկան ստանց վզակոթներից բռնին, պալատից դուս չպրտին:

*Թաքավորը Դալիբեգին նշանակեց հիրա տեղը Թաքավոր:
Ընդանք հասան հիրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մու-
րազին:*

*Երգնքից իրեք հատ խնձոր ա հընգընըմ, մեկը՝ պատմողին,
էրկուսն էլ՝ անգաջ անողներին:*

